



«ԳՈՐԻՒՄ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի  
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻՋՄՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ» ՊՈԱԿ-Ի  
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ N 92

.11.01.2010թ.

թ. Հովհաննես


«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵԶ» ՊՈԱԿ-Ի ՊԱՌՈՒՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐԻ  
ՆԵՐՔԻՆ ԿԱՍՈՆԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գորիսի պետական քոլեզ» ՊՈԱԿ-Ի կանոնադրությամբ.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

- Հաստատել «Գորիս պետական քոլեզ» ՊՈԱԿ-Ի պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգը:

Նախագահ՝ ԱՐԱՐԱՏ ԼԱԼԱԲԵԿՅԱՆ

  
(ստորագրություն)

Քարտուղար՝ ԱՆԺԵԼԱ ԱՌԱԲԵԿՅԱՆ

  
(ստորագրություն)

«ԳՈՐԻԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի

Տ Ն Օ Ւ Ե Ն

Հ Ր Ա Մ Ա Ն Հ Կ Լ

«01» 03 2018թ.

թ. Դարիուս

«ԳՈՐԻԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի  
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻՉԱՍՏԵՐԻ ՆԵՐՁԻՆ ԿԱՍՈՒՆԱԿԱՐԳԸ  
ԴԱՏՄԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Դատատեղ «ԳՈՐԻԱՆԻ պետական քոլեջ» ՊՈԱԿ-Ի պաշտոնից ազատման մեխանիզմների ներքին կանոնակարգը (հավելված):
2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

Տ Ն Օ Ւ Ե Ն Կ Ա Ր Ե Ն Լ Ա Զ Ա Ր Ց Ա Ն



Հավելված  
Դաստանվածէ  
«Գորիսի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի  
տնօրենի 201\_թ. «\_\_\_\_\_» «\_\_\_\_»-ի N \_\_\_\_\_ հրամանով

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ» ՊՈԱԿ-Ի  
ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏՄԱՆ ՄԵԽԱՆԻՉԱԿԱՆ ՆԵՐԹԻՆ ԿԱՍՈՆԱԿԱՐԳԸ

### ՆԱԽԱԲԱՆ

Աշխատանքային հարաբերություններում կարևոր դեր ունի աշխատանքային պայմանագրի լուծումը: Լուծել աշխատանքային պայմանագիրը նշանակում է դադարեցնել աշխատանքային հարաբերություններն աշխատողի և գործատուի միջև: Աշխատանքային պայմանագրի լուծումը բացասական ելքով գործընթաց է: Յակառակ հասարակության մեջ շրջանառվող կարծիքի (ոմանց թվում է, թե գործատուները շահագրգուված են աշխատողներին պարբերաբար աշխատանքից ազատելու հարցում) աշխատանքային պայմանագրի լուծմանը շահագրգուված չէ աշխատանքային հարաբերությունների և ոչ մի մասնակից, քանի որ այն վճառում է, թե՝ գործատուին, թե՝ աշխատողին, և թե՝ պետությանը: Աշխատողների համար աշխատանքից ազատվել նշանակում է կորցնել աշխատանքային եկամուտները, դուրս գալ աշխատանքային կոլեկտիվի շփման ոլորտից, զիջել սոցիալական բարձր դիրքը, սասանել իր և իր ընտանիքի բարեկեցությունը և այլն: Գործատուի համար աշխատանքային պայմանագրի լուծումը տնտեսապես շահավետ չէ, եթե այն պայմանավորված չէ արտադրական անհրաժեշտությամբ, քանի որ նման դեպքերում ավելանում է աշխատանքից ազատվողի փոխարեն նոր աշխատող վարձելու համար գործատուի կողմից կատարվող տրանսակցիոն ծախսերը, մեծանում է նոր աշխատողի և կոլեկտիվի մյուս անդամների միջև նորմալ հարաբերություններ ունենալու ռիսկերը, անհրաժեշտ է որոշակի ժամանակ, որպեսզի նոր աշխատողը ծանոթանա աշխատանքի կազմակերպման առանձնահատկություններին և այլն: Աշխատանքային պայմանագրի լուծելիս պետությունը նույնպես կորուստներ է ունենում, քանի որ աշխատանքային պայմանագրի լուծմանը չի իրացվում աշխատողի աշխատելու իրավունքը, նվազում է հարկատուների թիվը, մեծանում է պետության նկատմամբ սոցիալական պահանջները (գործազրկության նպաստ, աղքատության ընտանեկան նպաստ և այլն): Ահա, թե ինչու աշխատանքային հարաբերությունների նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնող պետական մարմիններն առանձնահատուկ ուշադրություն են դարձնում աշխատանքային պայմանագրի լուծման գործընթացի իրավական ապահովման կողմին:

Աշխատանքային հարաբերությունները գործատուի և աշխատողի միջև ազատ կամարտահայտությամբ ձեռք բերված համաձայնություն է: Հետևաբար, նրանք որևէ հանգամանքով, կամ կողմերից որևէ մեկի ազդեցությամբ կաշկանդված չեն աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու հարցում: Աշխատանքային պայմանագրի լուծումը բխում է, ինչպես գործատուի տնտեսական նպատակահարմարությունից (հետևաբար գործատուն կարող է նախաձեռնել աշխատանքային հարաբերությունների դադարեցման՝ այդ թվում նաև կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման գործընթացը), պայմանագրի գործողության ժամկետից (այս դեպքում գործատուն և աշխատողը պայմանագիրը լուծելու հավասար նախաձեռնության իրավունք ունեն), աշխատողի ցանկությունից (աշխատողը նույնպես կարող է նախաձեռնել աշխատանքային հարաբերությունների դադարեցման՝ այդ թվում նաև կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման գործընթացը), այնպես էլ պետության կողմից սահմանված որոշակի հանգամանքներից (տվյալ դեպքում խոսքը կարող է վերաբերվել 14-16 տարեկան երեխաների աշխատանքը դադարեցնելու կամ որոշակի աշխատանքներ կատարելու իրավունքներից զրկված լինելու, առողջության պատճառով կամ դատարանի վճռով աշխատանքի չթույլատրելու դեպքերին): Սակայն աշխատանքային պայմանագրի լուծման չկանոնակարգվածությունն անթույլատրելի է, քանի որ առանձին դեպքերում, աշխատանքային պայմանագրի լուծման վերաբերյալ կողմերից յուրաքանչյուրի անձնական նախաձեռնությունը կամ քմահաճ վերաբերմունքը կարող է վճասել մյուս կողմի իրավունքներն ու օրինական շահերը, ուստի աշխատանքային պայմանագրի լուծման իրավական հիմքերը, դրանց իրականացման կարգն ու պայմանները ենթարկվել են օրենսդրական խիստ կանոնակարգման: Ավելին, աշխատակազմի կառավարման գործունեությամբ զբաղվող աշխատողները, պարտավոր են աշխատանքային պայմանագրի լուծումն իրականացնելիս ապահովել կադրային գործավարության պատշաճ մակարդակ՝ գերծ մնալով որոշակի պատասխանատվությունից:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է կողմերի միջև տեղեկատվություն (ծանուցում) փոխանակելու միջոցով կամ էլ՝ առանց ծանուցման: Ծանուցումն աշխատանքային հարաբերությանը վերաբերող կողմերից մեկի ապագա մտադրությունների մասին մյուս կողմին տեղեկատվության ապահովումն է, որի տրամադրման կարգը, ուժը կորցրած ճանաչվելու ժամկետներն ու պայմանները սահմանված են ՀՀ աշխատանքային օրենսգրքով: Ծանուցումը մի դեպքում առաջարկություն է աշխատանքային պայմանագիրը լուծելու վերաբերյալ՝ օրինակ կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծվելու դեպքում ներկայացվող ծանուցումը՝ այս դեպքում ծանուցման մեջ նշված պայմանները կրում են հայեցողական բնույթ, իսկ մյուս դեպքում ծանուցումն ունի իմպերատիվ բնույթ, այսինքն ծանուցման մեջ նշված

պայմանները ենթակա են անվերապահ կատարման: Օրինակ աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալու դեպքում ներկայացվող ժանուեցումը և այլն:

Աշխատանքային պայմանագիրը լուծվում է առանց ժանուեցման, երբ գործատուն նախատրամադրված չէր աշխատանքային հարաբերությունները դադարեցնելու հարցում, սակայն ծագել են աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը լուծելու օբյեկտիվ պատճառներ:

Վերոնշյալ հարցերը կանոնակարգող իրավական ակտերի կիրառման ընթացքում առաջացող հիմնախնդիրների լուծմանն է ուղղված սույն կանոնակարգը: Այն գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման գործընթացը կանոնակարգող յուրահատուկ ուղեցույց է, որտեղ ներկայացված է աշխատանքային պայմանագրի լուծման կադրային գործավարության իրավական փուլերը, առանձնահատկությունները, աշխատանքային պայմանագրի լուծումն հիմնավորող փաստաթղթերի տեսակները և օրինակելի ձևերը:

## ԴԵՊՔ 1.

### ԿՈՂՄԵՐԻ ՀԱՄԱՁՎԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔՎՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՋԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

#### 1.1. ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐՆ ԵՆ.

Գրավոր ժանուեցում ներկայացնելը  $\Rightarrow$  Ժանուեցումը գործավարական մատյանում գրանցելը  $\Rightarrow$  Պատասխան ժանուեցում ստանալը (7 օրվա ընթացքում)  $\Rightarrow$  Գրավոր համաձայնագիր կնքելը (ստորագրելը)  $\Rightarrow$  Ազատման թերթիկ տրամադրելը և լրացնելը  $\Rightarrow$  Հրաման ընդունելը  $\Rightarrow$  Հրամանի բնօրինակը հրամանապահակում ներառելը  $\Rightarrow$  Հրամանը հրամանների հաշվառման մատյանում գրանցելը  $\Rightarrow$  Հրամանն աշխատողի անձնական գործին կցելը  $\Rightarrow$  Վերջնահաշվարկ կատարելը (աշխատավարձ + աշխատավարձին ուղղված միջոցներ և դրան հավասարեցված եկամուտներ + չօգտագործված արձակուրդի հատուցում<sup>1</sup> + գույքային այլ պարտավորությունների մարում)  $\Rightarrow$  Աշխատողի պահանջով աշխատողին հաշվարկային թերթիկ տրամադրելը (նրանում նշվում է հաշվարկված, աշխատողին վճարվող և պահվող գումարները)  $\Rightarrow$  Անհատական հաշվետվություն կազմելը և իրավասու պետական մարմին փոխանցելը  $\Rightarrow$  Աշխատանքից ազատվողի մասին տեղեկատվությունը գինվորական կոմիսարիատ ներկայացնելը<sup>2</sup>  $\Rightarrow$  Աշխատանքից ազատվողի անձնական գործն արխիվացնելը և պահպանելը<sup>3</sup>:

<sup>1</sup> Չօգտագործված արձակուրդի հատուցման գումարներից հաշվարկվում և պետական բյուջե է մուծվում եկամտային հարկ, իսկ նպատակային սոցիալական վճար կատարելու պարտավորությունները ունեցողները նաև սոցիալական վճար:

<sup>2</sup> Աշխատանքից ազատվելու մասին տեղեկատվությունը՝ ոչ ուշ, քամ դրանց կատարման օրվանից 7-օրյա ժամկետում ներկայացվում է համապատասխան տարածքային գինկոմիսարիատ (ՀՀ կառավարության 10.05.2010թ.-ի N 657-Ն որոշում):

<sup>3</sup> Հաշվապահական փաստաթղթերը՝ ինչպես նաև համակարգչային (էլեկտրոնային) կրիչների վրա գտնվող տեղեկատվությունը՝ սկզբնական հաշվառման փաստաթղթերը, գրանցանայանները, ֆինանսական հաշվետվությունները, հաշվապահական հաշվառման քաղաքականությանը վերաբերող փաստաթղթերը, հաշվապահական հաշվառման մերենայական մշակման ծրագրերը կազմակերպության կողմից պահպանվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում, բայց ոչ պակաս, քան 5 տարի («Հաշվապահական հաշվառման մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված):

## 1.2. ԱՌԱՋԱՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

ա) համաձայնագրում նշվում են պայմանագրի լուծման ժամկետը և վերջնահաշվարկ կատարելու կարգը: Համաձայնագրում կարող է նախատեսվել նաև հատուցումներ: Հատուցում կարող է նախատեսվել այն դեպքում, եթե կողմերի համաձայնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման նախաձեռնությունը պատկանում է գործատուին:

բ) եթե յոթ օրվա ընթացքում կողմերից մեկը մյուս կողմին չի ծանուցում պայմանագիրը լուծելու իր համաձայնության մասին, ապա աշխատանքային պայմանագրի լուծման մասին առաջարկությունը համարվում է մերժված:

գ) հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պատասխանատվությունը կրում է կազմակերպության ղեկավարը:

### **ԴԵՊՔ 2.**

**ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԼՐԱՆԱԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ՝  
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՓՈՒԼԵՐԸ  
ԵՎ ԱՌԱՋԱՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

## 2.1. ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐՆ ԵՆ.

Գրավոր ծանուցում ներկայացնելը<sup>4</sup>  $\Rightarrow$  Ծանուցումը գործավարական մտից մատյանում գրանցելը  $\Rightarrow$  Ազատման թերթիկ տրամադրելը և լրացնելը  $\Rightarrow$  Հրաման ընդունելը  $\Rightarrow$  Հրամանը հրամանների հաշվառման մատյանում գրանցելը  $\Rightarrow$  Վերջնահաշվարկ կատարելը (աշխատավարձ + աշխատավարձին ուղղված միջոցներ և դրան հավասարեցված եկամուտներ + չօգտագործված արձակուրողի հատուցում<sup>5</sup> + գույքային այլ պարտավորությունների մարում)  $\Rightarrow$  Աշխատողի պահանջով հաշվարկային թերթիկ տրամադրելը (նշվում է հաշվարկված, աշխատողին վճարվող և պահպող գումարները)  $\Rightarrow$  Անհատական հաշվետվություն կազմելը և իրավասու պետական մարմին փոխանցելը  $\Rightarrow$  Աշխատանքից ազատվողի մասին տեղեկատվությունը գինվորական կոմիսարիատ ներկայացնելը<sup>6</sup>  $\Rightarrow$  Աշխատանքից ազատվողի անձնական գործն արխիվացնելը և պահպանելը<sup>7</sup>:

## 2.2. ԱՌԱՋԱՆԱՐԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

ա) Ծանուցման ժամկետ չի նախատեսվում փոխարինող աշխատողի համար,

<sup>4</sup> Ծանուցումը ներկայացվում է պայմանագրի գործողության ժամկետն ավարտվելուց առնվազն 10 օր առաջ:

<sup>5</sup> Տես տողատակի 1-ին գրառումը:

<sup>6</sup> Տես տողատակի 2-րդ գրառումը:

<sup>7</sup> Տես տողատակի 3-րդ գրառումը:

բ) ծանուցում չներկայացրած և աշխատանքային պայմանագրի ժամկետն ավարտվելուց հետո աշխատանքի չներկայացած աշխատողի հետ կնքված աշխատանքային պայմանագիրը համարվում է լուծված,

գ) որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագիրը կարող է դառնալ անորոշ ժամկետով կնքված աշխատանքայի պայմանգիր,

դ) վերջնահաշվարկ կատարվում է աշխատանքային պայմանագրի լուծման օրը, եթե պայմանագիրը չի լուծվել «բ» կետում նշված հիմքով (վերջին դեպքում վերջնահաշվարկը կատարվում է 5 օրվա ընթացքում):

### ԴԵՊՔ 3.

**ԱՇԽԱՏՈՂԻ ՆԱԽԱԶԵՌՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔՎՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾՎԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **3.1. ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾՎԱԿԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐՆ ԵՆ.**

Գրավոր ծանուցում ներկայացնելը<sup>8</sup> ⇒ Ծանուցումը գործավարական մտից մատյանում գրանցելը ⇒ Ազատման թերթիկ տրամադրելը և լրացնելը ⇒ Հրաման ընդունելը ⇒ Հրամանը հրամանների հաշվառման մատյանում գրանցելը ⇒ Վերջնահաշվարկ կատարելը (աշխատավարձ + աշխատավարձին ուղղված միջոցներ և դրան հավասարեցված եկամուտներ + չօգտագործված արձակուրդի հատուցում<sup>9</sup> + գույքային այլ պարտավորությունների մարում) ⇒ Աշխատողի պահանջով հաշվարկային թերթիկ տրամադրելը (նշվում է հաշվարկված, աշխատողին վճարվող և պահվող գումարները) ⇒ Աշխատանքային գրքույկում գրառում կատարելը և հետ վերադարձնելը ⇒ Անհատական հաշվետվություն կազմելը և իրավասու պետական մարմին փոխանցելը ⇒ Աշխատանքից ազատվողի մասին տեղեկատվությունը գինվորական կոմիսարիատ ներկայացնելը<sup>10</sup> ⇒ Աշխատանքից ազատվողի անձնական գործն արխիվացնելը և պահպանելը<sup>11</sup>:

#### **3.2. ԱՌԱՋԱՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.**

<sup>8</sup> Ծանուցումը ներկայացվում է աշխատանքային պայմանագիրը լուծելու օրվանից առնվազն 14 օր առաջ:

<sup>9</sup> Տես տողատակի 1-ին գրառումը:

<sup>10</sup> Տես տողատակի 2-րդ գրառումը:

<sup>11</sup> Տես տողատակի 3-րդ գրառումը:

- ա) կարող է նախատեսվել գրավոր ծանուցման 5 օրյա ժամկետ<sup>12</sup>,
- բ) իրավական հետևանքներ չի առաջացնում, եթե աշխատողի կողմից գրավոր ծանուցումը հետ է վերցրվում այն ներկայացնելուց հետո 3 օրվա ընթացքում,
- գ) վերջնահաշվարկ կատարվում է աշխատանքային պայմանագրի լուծման օրը:

#### ԴԵՊՔ 4.

**ՔՈԼԵԶԻ ՏՏՕՐԵՆԻ ՆԱԽԱԶԵՌՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ՝ ԸՍԾ  
ԾԱՆՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ: ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ  
ԱՌԱՋՎԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### **4.1. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԴԵՊՔԵՐԸ՝ ԸՍԾ ԾԱՆՈՒՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԻ**

Հ/Հ	Քոլեզի տնօրենի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը	Ծանուցման ժամկետները
1.	Քոլեզի լուծարման դեպքում	2 ամիս առաջ
2.	Արտադրության ծավալների և (կամ) տնտեսական և (կամ) տեխնոլոգիական և (կամ) աշխատանքի կազմակերպման պայմանների փոփոխման և (կամ) արտադրական անհրաժեշտությամբ պայմանավորված՝ աշխատողների քանակի և (կամ) հաստիքների կրճատման դեպքում.	2 ամիս առաջ
3.	Աշխատողի գբաղեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու, ինչպես նաև աշխատողի կենսաթոշակային տարիքը լրանալու դեպքում <ul style="list-style-type: none"> <li>✓ մինչև մեկ տարի աշխատողին՝</li> <li>✓ մեկից մինչև հինգ տարի աշխատողին՝</li> <li>✓ հինգից մինչև տաս տարի աշխատողին՝</li> <li>✓ տասից մինչև տասնհինգ տարի աշխատողին՝</li> <li>✓ տասնհինգ տարուց ավելի աշխատողին՝</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>✓ ոչ ուշ քան 14 օր առաջ</li> <li>✓ ոչ ուշ քան 35 օր առաջ</li> <li>✓ ոչ ուշ քան 42 օր առաջ</li> <li>✓ ոչ ուշ քան 49 օր առաջ</li> <li>✓ ոչ ուշ քան 60 օր առաջ</li> </ul>
4.	Փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով	3 օր առաջ
5.	Աշխատողի կողմից իր պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում	Ծանուցում չի նախատեսվում
6.	Աշխատողի նկատմամբ վստահությունը կորցնելու դեպքում	Ծանուց. չի նախատեսվում

<sup>12</sup> Եթե աշխատանքային պայմանագրի լուծումը կապված է աշխատողի կատարած աշխատանքը խոչընդոտող հիվանդության կամ աշխատանքային խեղման հետ, կամ կոլեկտիվ պայմանագրով նախատեսված այլ հարգելի պատճառներ կամ, կամ եթե գործառուն չի կատարում աշխատանքային պայմանագրով սահմանված պարտականությունները, խախտում է օրենքը կամ կոլեկտիվ պայմանագիրը, ինչպես նաև ՀՀ աշխատանքային օրենսգրքով նախատեսված այլ դեպքերում:

<p><b>7.</b> Աշխատողի երկարաւու անաշխատունակության հետևանքով (Եթե աշխատողը ժամանակավոր անաշխատունակության պատճառով աշխատանքի չի ներկայացել ավելի քան 120 օր անընդմեջ կամ վերջին տասներկու ամսվա ընթացքում՝ ավելի քան 140 օր).</p>	<p>Ծանուցում չի նախատեսվում</p>
---	-------------------------------------

## ԴԵՊՔ 4.2.

### ՔՈԼԵԶԻ ՏՆՕՐԵՆԻ ՆԱԽԱՉԵՌՆՈՒԹՅԱՄԲ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԵՊՔԵՐԻ

#### ԵՆԹԱԴԵՊՔ 4.2.1.

**ՔՈԼԵԶԻ ԼՈՒԾՄԱՐՄԱՆ, ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԻ ԿՐԾԱՏՄԱՆ, ՓՈՐՁԱՇՐՋԱՆԻ ԱՆԲԱԿԱՐԱՐ  
ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ, ԱՇԽԱՏՈՂԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՆ ԿԱՍ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԻՆ  
ՉՅԱՍՍՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԴԵՊՔԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՂՐԱՅԻՆ  
ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԱՌԱՋԱՎԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

#### 4.2.1.1. ԿԱՂՐԱՅԻՆ ԳՈՐԾԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՒԼԵՐՆ ԵՆ.

Աշխատանքից ազատման գործընթաց սկսելու հիմնավոր փաստաթղթի առկայությունը<sup>13</sup> ⇒ Գրավոր ծանուցում ներկայացնելը<sup>14</sup> ⇒ ծանուցումը գործավարական մտից մատյանում գրանցելը ⇒ Ազատման թերթիկ տրամադրելը և լրացնելը ⇒ Հրաման ընդունելը ⇒ Հրամանը հրամանների հաշվառման մատյանում գրանցելը ⇒ Վերջնահաշվարկ կատարելը (աշխատավարձ + աշխատավարձին ուղղված միջոցներ և դրան հավասարեցված եկամուտներ + արձակման նպաստ + չօգտագործված արձակուրդի հատուցում + այլ գույքային պարտավորությունների մարում) ⇒ Աշխատողի պահանջով հաշվարկային թերթիկ տրամադրելը (նրանում նշվում է հաշվարկված, աշխատողին վճարվող և պահվող գումարները) ⇒ Անհատական հաշվետվություն կազմելը և իրավասու պետական մարմին փոխանցելը ⇒ Աշխատանքից ազատվողի նասին տեղեկատվությունը գինվորական կոմիսարիատ ներկայացնելը<sup>15</sup> ⇒ Լուծարման դեպքերում անձնակազմին վերաբերող փաստաթղթերի առանձնացնելը և պետական կամ համայնքային

<sup>13</sup> Քոլեզի լուծարման, սնանկ ճանաչվելու և աշխատողների թվաքանակի կրծատման դեպքում աշխատանքից ազատման գործընթաց սկսելու հիմնավորումը արտադրական ցուցանիշներն են: Այս դեպքում որևէ փաստաթուղթ ծանուցմանը չի նախորդում:

<sup>14</sup> ա) Քոլեզի լուծարման և աշխատողների թվաքանակի կրծատման դեպքում սահմանվում է ծանուցման երկանյա ժամկետ,  
բ) փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով աշխատանքից ազատման դեպքում սահմանվում է ծանուցման 3-օրյա ժամկետ,  
գ) աշխատողի գրադեցրած պաշտոնին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու դեպքում սահմանվում է ծանուցման երկշաբարյա ժամկետ:

<sup>15</sup> Տես տողատակի 2-րդ գրառումը:

արխիվ հանձնելը<sup>16</sup>, իսկ այլ դեպքերում՝ աշխատանքից ազատվողի (ների) անձնական գործն արխիվացնելը և պահպանելը<sup>17</sup>:

#### 4.2.1.2. ԱՌԱՋԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

1. աշխատողների թվաքանակի կրճատման դեպքում՝ այլ աշխատանքի առաջարկություն,
2. բոլոր դեպքերում, բացառությամբ փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով աշխատանքից ազատման դեպքի՝ գործատուի միջոցների հաշվին ծանուցման ժամկետի 10%-ի չափով ազատ ժամանակի տրամադրում,
3. վերջնահաշվարկ կատարվում է աշխատանքային պայմանագրի լուծման օրը,
4. մեկ ամսվա միջին աշխատավարձի չափով արձակման նպաստ տրվում է՝ Քոլեջի լուծարման, Քոլեջի սնամկ ճանաչվելու և աշխատողների թվաքանակի կրճատման դեպքերում: Վերջին դեպքում եթե աշխատողը ազատվել է աշխատանքից այլ աշխատանքի փոխադրվելու Քոլեջի առաջարկությունը մերժելու դեպքում, ապա արձակման նպաստի չափը կազմում է աշխատողի երկու շաբաթվա աշխատավարձի չափը:

Երկու շաբաթվա աշխատավարձի չափով արձակման նպաստ է տրվում աշխատողի գրադարանին կամ կատարած աշխատանքին չհամապատասխանելու, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում, ինչպես նաև այն դեպքերում, երբ աշխատողը ազատվել է աշխատանքից այլ աշխատանքի փոխադրվելու Քոլեջի առաջարկությունը մերժելու դեպքում:

5. ծանուցման ժամկետների խախտման դեպքում, բացառությամբ փորձաշրջանի անբավարար արդյունքի պատճառով աշխատանքից ազատման դեպքի, աշխատողին վճարվում է տուժանք՝ ծանուցման յուրաքանչյուր ժամկետանց օրվա համար միջին ժամային աշխատավարձի չափով,

6. Հաշվապահական հաշվառման և այլ փաստաթղթերի պահպանումը կազմակերպելու պատասխանատվությունը կրում է Քոլեջի ղեկավարը:

7. գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը չի կարող լուծվել.
  - 1) աշխատողի ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածում<sup>18</sup> բացառությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով նախատեսված դեպքերի,
  - 2) աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

<sup>16</sup> «Արխիվային գործի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մաս

<sup>17</sup> Տես տողատակի 3-րդ գրառումը:

<sup>18</sup> ժամանակավոր անաշխատունակության հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կառավարության 2011թ. հունիսի 14-ի N1024-Ն դրոշմամբ:

3) Իղի կանանց հետ՝ իղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև իղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

4) Երեխային փաստացի խնամող՝ արձակուրդում չգտնվող անձի՝ մինչև մեկ տարեկան երեխա խնամելու ամբողջ ժամանակահատվածում, բացառությամբ ՀՀ աշխատանքային օրենսգրքի 113-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 5-րդ, 6-րդ, 8-10-րդ կետերով նախատեսված դեպքերի.

3) գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով.

4) պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից աշխատողի վրա դրված պարտականությունների կատարման ժամանակահատվածում, բացառությամբ սույն օրենսգրքի 124-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված դեպքերի:

2. Եթե աշխատողը սույն կանոնակարգի 7-րդ մասով նախատեսված ժամանակահատվածների ավարտից հետո չի ներկայանում աշխատանքի, ապա քոլեզի տնօրենը սույն գլխով նախատեսված հիմքերով կարող է լուծել աշխատանքային պայմանագիրը:

է) Քոլեզի վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար,

ը) Քոլեզի տնօրենի մահը հիմք չէ աշխատանքային պայմանագրի լուծման համար:

#### 4.2.1.3. ԲԱՑԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԵՆ.

ա) Սույն կանոնակարգի 5-րդ կետով նախատեսված սահմանափակումները չեն կիրառվում քոլեզի լուծարման կամ քոլեզի սնանկ ճանաչման հետևանքով աշխատանքային պայմանագիրը լուծելիս: